

ԿԱՐԾԻՔ

Կարեն Մարատի Մանուչարյանի՝ «Գուրգեն Խանջյանի ստեղծագործական թեմատիկ և կառուցվածքային առանձնահատկությունները» թեմայով թեկնածուականատենախոսության մասին

Իր գեղարվեստական ընդգրկմամբ Գուրգեն Խանջյանի ստեղծագործությունը ժամանակակից հայ արձակի այն եզակի երևույթներից է, որտեղ մերօրյա անհատի հոգևոր ներքին դրաման դիտարկվում է հասարակական ու պատմաքաղաքական իրողությունների համընդհանուր տեսադաշտում՝ ստանալով գեղագիտական լուծումների միանգամայն նոր որակ: Այս և նմանատիպ մի շարք այլ պատճառներով ատենախոսության թեմայի ընտրությունն արդիական է և գիտականորեն հիմնավորված:

Կարեն Մանուչարյանի ներկա աշխատանքը նպատակ ունի համադրված մեթոդաբանությամբ բացահայտել Խանջյանի արձակի թեմատիկ ուղղածիզ համակարգը, գեղարվեստական կառուցվածքի զարգացման օրինաչափությունները և հեղինակի աշխարհընկալման մոդելը, որոնք դեռևս ամբողջականորեն ուսումնասիրված չեն:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք հիմնական գլուխներից, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից:

Ներածության բաժնում հեղինակը ներկայացնում է թեմայի ընտրության անհրաժեշտությունն ու գիտական հիմքերը, ընդգծում Գ. Խանջյանի դերը հայ արձակի զարգացման գործում՝ ձգտելով հիմնավորել իր դիտարկումները ժամանակագրական ու գեղարվեստական տեսանկյուններից:

Առաջին գլխում («Գուրգեն Խանջյանի ստեղծագործությունն էքզիստենցիալիզմի և կենսագրական իրողությունների շղթաներում») ատենախոսն անդրադառնում է Խանջյանի արձակի գաղափարական և թեմատիկ հիմքերին՝

փորձելով բացահայտել գրողի ստեղծագործական աշխարհը կազմող հիմնական բովանդակային առանցքները: Այստեղ տեսանելի է հեղինակի ձգտումը՝ Խանջյանի արձակի ներքին գաղափարական շարժումները դիտարկել հասարակական միջավայրի, ժամանակի բարոյահոգեբանական տրամաբանության և պատմական հիշողության դինամիկայի համատեքստում: Սակայն այս մոտեցումը տակավին մնում է նկարագրական մակարդակի վրա. ատենախոսը հաճախ սահմանափակվում է վերացական ընդհանրացումներով՝ առանց տեքստաբանական կոնկրետ վերլուծության:

Երկրորդ գլխում («Գուրգեն Խանջյանի ստեղծագործությունը սոցիալ-քաղաքական իրադարձությունների շղթայում. Գուրգեն Խանջյանը և ժամանակակից հայ արձակը») Մանուչարյանը սոցիալ-քաղաքական իրադարձությունների ենթատեքստում գործնական գնահատականներ է տալիս Խանջյանի ստեղծագործությանը, ինչն ինքնին նպատակային է ժամանակակից հայ արձակի թեմատիկ և բովանդակային ներքին պարունակների բացահայտման առումով: Այստեղ ատենախոսը քննության է առնում ժամանակակից հերոսի՝ հետխորհրդային իրականության սոցիալ-հոգեբանական համընդհանուր փոփոխություններով ու տատանումներով պայմանավորված ներքին դրաման՝ ժամանակաշրջանի ընդհանուր շղթայակարգում նրան դիտարկելով ոչ միայն որպես ինքնուրույն սուբյեկտ, այլև որպես ժամանակակից սոցիալ-քաղաքական դաշտի արձագանք:

Ատենախոսության երրորդ գլխում («Կառուցվածքաբանական հարցեր») Կ. Մանուչարյանն իրավացիորեն նկատում է, որ Խանջյանի արձակն առանձնանում է կառուցվածքային բարդությամբ, բազմաձայնությամբ և տեքստի ներքին բազմաշերտությամբ, սակայն գիտական բավարար համակարգվածությամբ չի բացատրում այդ բազմաշերտության իրականացման մեխանիզմները, ինչի հետևանքով ստեղծագործության կառուցվածքային ներքին կապերը մնում են չբացահայտված:

Ընդհանուր առմամբ, ատենախոսն զգում է Խանջյանի արձակի ներքին դինամիկան և կառուցվածքային ներդաշնակության խնդիրը՝ թեկուզև առանց տեսականորեն այն ամբողջացնելու։ Սա վկայում է հետազոտողի՝ գեղարվեստական մտածողության ներքին շերտերը ճանաչելու հետևողականության մասին, ինչը, անշուշտ, ժամանակի ընթացքում կհասնի գիտական անհրաժեշտ համակարգվածության։

Մանուչարյանը հիմնականում պատկերացնում է Խանջյանի ստեղծագործության ընդհանուր ուղղությունը, տեսնում նրա մտածողության գեղագիտական հենքը, որոշակիորեն ցույց տալիս ժամանակի և պատմության ընկալման առանձնահատկությունները հայ նորագույն արձակի համատեքստում։ Կարևոր է նաև, որ նա փորձում է Խանջյանի արձակը դիտարկել ոչ միայն որպես գեղարվեստական երևույթ, այլև որպես արժեքաբանական համակարգ՝ կապված ազգային ինքնագիտակցության և հիշողության մշակույթի հետ։

Այսուհանդերձ, ատենախոսությունն ունի տեսական և մեթոդաբանական մի շարք թերություններ, որոնք հանգեցնում են աշխատանքի վերլուծական արժեքի թուլացմանն ու ընկալման անիմաստ բարդացմանը։ Առաջին հերթին նկատելի է կենտրոնական թեմայից անհարկի շեղումների հանգամանքը, որն ուղեկցվում է աշխատանքի գրեթե բոլոր հատվածներում՝ մատուցման եղանակների և վերլուծությունների ամրագրման ապրիորի մեթոդաբանության հետևանքով էապես չնպաստելով հիմնական նյութի ուսումնասիրությանն ու գիտահամակարգմանը։

Այսպես, օրինակ, առաջին գլխի երկրորդ ենթագլխում («Էքզիստենցիալիզմի բնութագրական առանձնահատկությունները») ատենախոսն ամբողջական էջեր է հատկացնում էքզիստենցիալիզմի գաղափարագեղագիտական դրույթներին, որոնք չեն հաղթահարում հանրագիտարանային տեղեկատվության սահմանները։ Այս հատվածներում ատենախոսը պարզապես արձանագրում է, թե ինչ է, առհասարակ, էքզիստենցիալիզմը, ովքեր են նրա ակունքներում կանգնած հեղինակները, ապա կրկնում նրանց հայտնի ստեղծագործությունների նույնքան հայտնի

վերլուծությունները՝ ջղաձիգ փորձեր կատարելով այդ ամենն ինչ-որ կերպ կապելու

Գ. Խանջյանի ստեղծագործության առանձնահատկությունների հետ: Մեր դիտարկումն, անշուշտ, չի ժխտում վերոհիշյալ հոսանքի հետ գրողի ստեղծագործական առնչությունը: Խնդիրն այստեղ այդ առնչությունների վերհանման գիտամեթոդական սկզբունքներն ու եղանակներն են, որոնց բավարար կիրառման հմտությունների բացակայությունն ուսումնասիրության վերլուծական միջուկը հանգեցնում է անխուսափելի փակուղու: Նույն սկզբունքով Մանուշարյանն անդրադառնում է եվրոպական տասնյակ գրողների, մշակութաբանների, կառուցվածքաբանների երկերին, արձանագրում գրաքննադատությանը վաղուց հայտնի նրանց թեզերն ու հայացքները, համաշխարհային գրական հսկաներից կտրուկ անցումներ կատարում արդի հայ արձակի ներկայացուցիչներին՝ ձգտելով Խանջյանի գեղագիտական հայացքների ձևավորման նախադրյալները տեսնել Հոմերոսից մինչև Արամ Պաչյան ընկած գրեթե բոլոր գրական շրջափուլերում: Ինչ խոսք, գրական գուգահեռների ու ազդեցությունների գործոնը միշտ էլ կիրառելի է այս կամ այն գրողի ստեղծագործական աշխարհայացքի ճանաչողության ու բացահայտման գործում, եթե ընդգծված են տիպաբանական աղերսներն ու անխուսափելի՝ երևույթի գիտական հիմնավորման անհրաժեշտությունը: Այնինչ ատենախոսի պարագայում այս ամենը վերածվում է ինտելեկտուալ սեփական կարողությունները ցուցադրելու մի հարթակի, որտեղ գործող ամենաակնհայտ շարժառիթը տպավորություն ստեղծելու աննահանջ մղումն է՝ սկզբունք ունենալով այս նպատակին հասնելու համար կանգ չառնել հնարավոր ու անհնարին բոլոր միջոցների ու եղանակների առջև: Երբեմն տպավորություն է ստեղծվում, թե երգիստենցիալիզմի հիմնադրույթները Գուրգեն Խանջյանի փոխարեն, ասենք, Աթաբեկ Խնկոյանի աշխարհայացքի ձևավորման գործում նույն սկզբունքով ու մեթոդաբանությամբ հարմարեցնելու դեպքում էական ոչինչ չէր փոխվի:

Ինչևէ: Գրաքննադատության մեջ գոյություն ունեն, այսպես կոչված, չգրված օրենքներ, որոնց շարքին է պատկանում որոշակի մակարդակներում էրուդիցիոն նշաձողի կտրուկ տատանումների անընդունելիությունը: Այս համատեքստում

ատենախոսը մեջբերումներ է կատարում, օրինակ, Մ. Բախտինից՝ միննույն ժամանակ իր դիտարկումներն ամրագրելու նպատակով դիմում Վահրամ Դանիելյանի օգնությանը, Խանջյանի երկերի կառուցվածքային խնդիրները քննելիս վկայակոչում է, ասենք, Կ. Լևի-Ստրոսին և ապա՝ Ավիկ-Սլավիկ Հարությունյանին: Իհարկե, ասվածը չի նշանակում, թե հայագգի վերոհիշյալ հեղինակներն ի վիճակի չեն գիտական լուրջ բանաձևումներ կատարելու և կամ անընդունելի է նրանց հղումներ կատարելու հանգամանքը: Դիտարկումն այստեղ պետք է ընկալել (կրկնենք) գրաքննադատության չգրված օրենքների հանգույն, որոնցից մեկն էլ, օրինակ, աֆրիկյան հայտնի ասացվածքն է.«Երբ կատուն որոշում է առյուծ դառնալ, նախ պետք է կորցնի հետաքրքրությունը մկների հանդեպ»...

Այսպիսով, ատենախոսության աշխարհագրության ընդլայնման նմանատիպ փորձերը չեն ինտեգրվում վերլուծության կոնկրետ օբյեկտի հետ և վերածվում են ոչ թե գիտական ուսումնասիրության, այլ տեղեկագրական ցուցադրման, որի պատճառով ատենախոսության նորարարական գիտական ներդրումը գրեթե մնում է չբացահայտված:

Վերլուծությունների կառուցվածքային համակարգը խիստ բարդությամբ լի է և անտեղի խճճված, որտեղ վերամբարձ բառակապակցություններն ու գիտականորեն տեսքի չբերված բանաձևումները չեն ծառայում թեմայի խորքային ու հանգամանալից քննությանը: Արդյունքում տեքստը հաճախ հիշեցնում է տեսական «լաբիրինթոս», որտեղ բացակայում է վերլուծական և գիտահամակարգման հիմնական առանցքը: Կառուցվածքային այս ծանրաբեռնվածությունը, բացի ընթերցողական դժվարություններից, թուլացնում է վերլուծության ճանաչողական արդյունավետությունը:

Պատշաճ մակարդակներում հիմնավորված չէ նաև Խանջյանի անձնական կյանքի մանրամասների (ծնողների ամուսնալուծություն, ակոհիլի չարաշահում, ինքնասպանության փորձ և այլն)՝ ինչ-որ առումով մերկ ցուցադրումը գիտական նման հարթության մեջ: Անցնելով արվեստագիտական վերլուծության

սահմանները՝ այս տեղեկությունները դառնում են ֆորմալ անձնային իրողություն, որը շեղում է կենտրոնական թեմայից և նվազեցնում ակադեմիական աշխատանքի գիտական արժեքը:

Ատենախոսության մեջ Մանուչարյանի «ներսային» և «դրսային» եսերի մասին մշտական հղումները ներկայացնում են մեթոդաբանական և էպիստեմոլոգիական լուրջ խնդիրներ: Եզրույթների կիրառումը, թվում է, նպատակ ունի խորացնել վերլուծության սուբյեկտիվ շերտերը, սակայն իրականում մնում է հիմնագուրկ և անորոշ, քանի որ հեղինակն այդպես էլ չի առաջարկում հստակ սահմանումներ կամ գիտական թեզեր՝ ինչ է հասկանում ներսային կամ դրսային «ես»-ի տակ: Իսկ առաջարկության հազվադեպ փորձերն էլ պրիմիտիվ են և չեն բանաձևվում գիտական պատշաճությամբ:

Ավելին, եզրույթների անվերապահ կրկնությունը և դրանց ընդգծված մատուցումը վերլուծությունը հաճախ մղում է դեպի ֆորմալիզմի տարածք, որտեղ մտավոր շերտերը ձգվում են ու բարդացվում՝ առանց գիտագործնական արժեքի: Արդյունքում՝ «փիլիսոփայական ծածկագրերի» վերջնական իմաստն ու նշանակությունը գիտականորեն չեն բացահայտվում: Ստացվում է տեքստ, որտեղ սուբյեկտը և վերլուծությունը դառնում են մի տեսակ ինքնանպատակ «տեսական շքեղություն», և ընթերցողը ստիպված է կռահել, թե իրականում ինչ է ուսումնասիրվում, և ինչպես են այս ներսային ու դրսային «ես»-երը կապվում ստեղծագործության կառուցվածքային կամ թեմատիկ առանձնահատկությունների հետ:

Ատենախոսության գիտակառուցվածքային ամբողջական պլանում նկատելի է մեթոդաբանական անկայունությունը. Մանուչարյանը միաժամանակ օգտագործում է կառուցվածքային, թեմատիկ և հոգեբանական մեկնության սկզբունքներ՝ առանց դրանց միջև տեսական հստակ սահմանագծումներ կատարելու: Այս անորոշությունը բերում է վերլուծության ներքին պառակտման, որի հետևանքով աշխատանքը կորցնում է գիտական համակարգվածությունը:

Առանձին բազմաթիվ ձևակերպումների ու բառակապակցությունների կիրառման առումով ևս աշխատանքը գերծ չէ թերություններից: Ահավասիկ՝ «Ներսուդուրսային մակարդակներ», «Ներսային հոգեվիճակ», «Փակության և սահմանայնության տիրույթներում գտնվող մարդ» և այլն:

Միննույն ժամանակ հարկ է նշել, որ ատենախոսը որոշակիորեն տիրապետում է գրականագիտական լեզվի ավանդույթներին, փորձում վերջիններին համադրել ժամանակակից լեզվամտածողության որոշ տարրեր, ինչը շատ դեպքերում չնայած խճճում է նրա խոսքը, բայց և վկայում է այն մասին, որ արդյունքում ատենախոսը ձգտում է կառուցել լեզվաոճական իր ինքնուրույն համակարգը:

Հաշվի առնելով վերոշարադրյալը՝ առաջարկում ենք Կարեն Մանուչարյանին Ժ.01.02 («Նորագույն շրջանի հայ գրականություն») մասնագիտությամբ բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան շնորհելու որոշումը թողնել մասնագիտական խորհրդի վերջնական քննարկմանը:

Պաշտոնական ընդդիմախոս՝ Բ. Գ. Պ.

Հ. Գ. Մուսայելյան

11. 11. 2025թ.

